

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
21 մարտի 2013 թ.  
Պետական գրանցման թիվ 10013099

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

1 փետրվարի 2013 թ.  
ք. Երևան

N 05-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

### ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԿՐՊԱԿՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման, բժշկական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական ու բարձրագույն (մասնագիտական) կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգեր և նշված գործունեության իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» թիվ 867 որոշման հավելված N 3-ով հաստատված Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման լիցենզավորման կարգի 35-րդ կետը,

#### *Հրամայում եմ՝*

Սահմանել դեղատներում կամ դեղատնային կրպակներում բժշկական թափոնների հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:

**Դ. Դումանյան**

Հավելված  
ՀՀ առողջապահության նախարարի  
2013 թվականի փետրվարի 1-ի  
N 05-Ն հրամանի

#### Կ Ա Ր Գ

### ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԿՐՊԱԿՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Մույն կարգով կարգավորվում են դեղատներում կամ դեղատնային կրպակներում բժշկական թափոնների հաշվառման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով դեղատներում կամ դեղատնային կրպակներում (այսուհետ՝ կազմակերպություն) առաջացող բժշկական թափոններն են՝ օգտագործման համար ոչ պիտանի՝

- 1) դեղերը,
- 2) դեղանյութերը,
- 3) բժշկական նշանակության ապրանքները:

3. Սույն կարգի 1-ին կետում նշված դեղերը, դեղանյութերը, բժշկական նշանակության ապրանքները հաշվառվում են որպես բժշկական թափոն դրանք խոտանվելուց հետո՝ հետևյալ դեպքերում.

- 1) լրացել է դրանց պիտանիության ժամկետը,
- 2) հայտնաբերվել է դեղի փաթեթավորման, պիտակի, տարողության ամբողջականության խախտում, դեղի փչացման նշաններ (ձևի, գույնի, թափանցիկության և այլ հատկանիշների փոփոխություն),
- 3) եթե ստացվել է տեղեկատվություն կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված լաբորատոր փորձաքննության արդյունքում պարզվել է դեղի կամ դեղանյութի կամ բժշկական նշանակության ապրանքի որակի անհամապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին,

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հետ են հավաքվել Հայաստանի Հանրապետությունում արտադրված դեղերը:

4. Կազմակերպությունում բժշկական թափոնների հաշվառելու նպատակով իրականացվում է ներքին մշտադիտարկում, որի իրականացման կարգը սահմանվում է ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 24-ի 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2-1.3-3 սանիտարական կանոններ և նորմեր»-ի 12-րդ կետով նախատեսված բժշկական թափոնների անվտանգ գործածությունը կարգավորող գործողությունների ակտով:

5. Ներքին մշտադիտարկումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 29-ի N 867 հավելված N 3-ով հաստատված Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության լիցենզավորման կարգի 14-րդ կետով նշանակված պատասխանատու անձը, իսկ մեկ վայրում դեղատնային գործունեություն իրականացնող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից նշանակված պատասխանատու անձը:

6. Դեղերի պիտանիության ժամկետները լրանալուց առնվազն մեկ շաբաթ առաջ, իսկ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու յուրաքանչյուր դեպքը հայտնաբերելիս՝ անմիջապես, պատասխանատու անձը գրավոր տեղեկացնում է կազմակերպության տնօրենին: Կազմակերպության տնօրենը երկօրյա ժամկետում կազմակերպում է պիտանիության ժամկետն անց և օգտագործման համար ոչ պիտանի դեղերի խոտանումը՝ իր լիազորությունների շրջանակում ընդունված իրավական ակտով ստեղծված հանձնաժողովի կողմից:

7. Հանձնաժողովը բաղկացած է տվյալ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ երեք աշխատակիցներից: Հանձնաժողովը կազմում է դեղատներում կամ դեղատնային կրպակներում դեղերի, դեղանյութերի, բժշկական նշանակության ապրանքների խոտանման արձանագրություն՝ սույն կարգի հավելված N 1-ով սահմանված ձևի համաձայն:

8. Դեղերը խոտանվելուց և խոտանման արձանագրության կազմումից անմիջապես հետո պատասխանատու անձի կողմից կատարվում է բժշկական թափոնների հաշվառում՝ սույն կարգի հավելված N 2-ով սահմանված ձևի մատյանում:

9. Բժշկական թափոնները հաշվառումից հետո մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ոչնչացման գործընթացը պատասխանատու անձի կողմից տեղավորվում և պահվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 հավելված N 3-ով հաստատված Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության լիցենզավորման կարգի 36-րդ կետով ժամանակավոր պահման համար նախատեսված պարկում կամ բեռնարկում:

Հավելված 1

Ձև 1

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N**

**Դ Ե Ղ Ա Տ Ն Ե Ր ՈՒ Մ Կ Ա Մ Դ Ե Ղ Ա Տ Ն Ա Յ Ի Ն Կ Ր Պ Ա Կ Ն Ե Ր ՈՒ Մ Դ Ե Ղ Ե Ր Ի,  
Դ Ե Ղ Ա Ն Յ ՈՒ Թ Ե Ր Ի, Բ Ժ Շ Կ Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ա Կ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Պ Ր Ա Ն Ք Ն Ե Ր Ի Խ Ո Տ Ա Ն Մ Ա Ն**

Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, գտնվելու վայրը/բնակության վայրը -----  
-----

Գործունեության իրականացման վայրը -----  
Խոտանման օրը, ամիսը, տարին -----  
Խոտանման արձանագրությունը կազմվել է -----կազմակերպության տնօրենի կամ -----  
անհատ ձեռնարկատիրոջ թիվ ----- հրամանով ստեղծված հանձնաժողովի անդամների  
մասնակցությամբ՝  
Նախագահ -----

Անուն՝ ազգանուն՝ պաշտոն

Անդամներ (անուն, ազգանուն, պաշտոն)՝

1. -----
- 
2. -----
- 
3. -----
- 
4. -----
- 

Խոտանման ենթակա բժշկական թափոններ

Հ/հ	Անվանում	Սերիա	Դեղաչափը և դեղաձևը	Պիտանիության ժամկետը	Քանակը	Խոտանված դեղերի, դեղանյութերի, բժշկական նշանակության ապրանքների արժեքը

Խոտանման պատճառը -----  
-----  
-----

Խոտանված բժշկական թափոնները պահվում են ժամանակավոր պահման համար նախատեսված պարկում կամ բեռնարկում՝ մինչև ոչնչացում:

(ընդգծել)

Նախագահ .....

Անուն՝ ազգանուն՝ ստորագրություն

Անդամներ (անուն, ազգանուն, ստորագրություն)՝

1. ....
2. ....
3. ....
4. ....

Կազմակերպության ղեկավար կամ անհատ ձեռնարկատեր

..... անուն, ազգանուն, ստորագրություն, օր, ամիս,

տարի

Հավելված 2

Ձև 2

**Մ Ա Տ Յ Ա Ն**

**ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԿՐՊԱԿՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

(Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, գտնվելու վայրը/բնակության վայրը, գործունեության իրականացման վայրը)

Սկիզբ «-----»-----20-----թ.

Վերջ «-----»-----20-----թ.

Հ/հ	Խոտանման արձանագրության համարը, օրը, ամիսը, տարին	Բժշկական թափոնի անվանումը	Սերիա Քանակությունը	Բժշկական թափոնը տեղադրելու օրը, ամիսը, տարին	Բժշկական թափոնը ոչնչացման հանձնելու օրը, ամիսը, տարին	Պատասխանատուի անունը, ազգանունը	Ստորագրություն
1.							
2.							
3.							
4.							
....							